Հուսիկ Արա

Սիրո անառակ որդի

Ես մի խաբված լովելաս,
որ իմ բաժինն առա սիրուց
ու մսխեցի օրերիս պարապ կանոնի մեջ,
նորից դարձել եմ տունը իմ լքած,
ուր ինձ գտար ավերակ
սիրո փակ դռան առաջ:

Ինձ աչքեր տվեցիր, ու ես տեսա քեզ,
սիրտդ դրեցիր մատներիս տակ՝ քո դողը զգացի ես,
և գրկիդ մեջ բարձրացա ինձ գետնած հողից վերև:
Մերկությունս ծածկեցիր քո բարակ մարմնով
և ետ բերեցիր հոգիս,
որ սատանային էր ու դժոխքում:

Ես որ մեռած էի՝ կենդանացա,
կորած էի՝ փրկվեցի,
հոգնած էի՝ անդորր առա:

Օ, մի՛ դատեք, թե ինչո՞ւ շռայլ եղար, սեր,
քեզ թողածի նկատմամբ
և ամենալավը տվեցիր նրան:
Որքան էլ գնամ հեռու,
ես միշտ քո արյունը,

դու իմ մարմինն ես, սեր.
քեզ հետ եմ իմ բոլոր օրերում,
և ամենը՝ ինչ քոնն է, իմն է նաև:

Ես հիմա լովելասը քո,
քո սերն եմ սիրում միայն
ու ներբողում եմ՝
ինչպես դժոխքը տեսած մեղավոր,
որ ամեն գեղեցիկ քո անունն ունի,
իմ սիրո կին: